

արձակէ . յափշտակեալ պատառեալ վագեր զորս իւր՝ և ննջէ յանդորրու . մարդ՝ ի սպանութիւն եկեալ , հատանի քուն յաշացն : Յամայի վայրս և յանապատս թափառի , սակայն և 'ի միայնութենէ իսկ սարսէ . զգերեզմանօք և ըզդամբանօք յածի , այլ՝ ի գերեզմանաց իսկ երկիւղ է նմա . զայն կկոցեալ զվայրօք յածէ , և 'ի տաճարի խրախութեան չիշխէ յորմունս անդր յառել , երկուցեալ մի գուցէ նշմարիցէ՝ ի նմա զմահահրաւէր գիրսն : Յառաւելութիւն տաննայն զարթնուն բովանդակ իսկ զգայութիւնքն . ի մթան աղջամդի երեւութանան նմա խօլականք սպառնալիցք , և ժահահոտ ձապաղեաց ընդ ռնդուննա հարկանի . զդառնութիւն թիւնից ձաշակէ և 'ի կերակուրս անդ զորս ինքնին խահագործէ . մինչդեռ խաղաղական լուութի պատէ զաշխարհ համօրէն՝ զնրբարուր ականջն նորա խրամիւն աղմուկք աղաղակի : Դ գիրկընդիւառն լինելընդ սիրելոյ բարեկամին , կարծէ ընդ հանդերձիւք նորա զդաշոյնն երկսայրի ծածկեալ . . . :

Հ . Դ . Բ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԳՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ  
Է.

Ո՞ւշէ Վերերդահայր Հայոց :

Այդ օք քանի և քանի անգամ ազգային դպրութիւն սիրող սիրսք՝ հական քնարի մը ձայն լսելով , չեն հառաջած մեզի հետ՝ թէ ուր են Հայկազանց երգերը , ուր են Հայ Հոմերոսները : Հնացեալ ժամանակին անհուն և անյայտ ծոցուն մէջ այս հառաջանքներն հնչեր ծաւալեր կորեր են : Դախնի ժամանակներուն դիւցազնական հեթանոսական երգերը կրկնելէն գրեթէ բոլորովին յուսահատած Հայկական քնարը՝ կը դառնայ քրիստոնէութեան նորոգած դարերուն վրայ , և անկէց կը կանչէ իր նոր թելերուն վսեմական

բարձրաբարբառ ձայնը . շատ հեղ կը հանդիպին պէսպէս և գեղեցիկ ձայներ , բայց այս փնտուած մեծին երգերը գեռ չփարեցան իր աղեացն վրայ . գիտէ մէկ Հայ և սրբազնն Հոմերոս մը , որ Յունաց հին Հոմերոսին պէս իր Հայ աղգին մտաց և աշխուժից ներշնչողն է . Հայաստանի հնացեալ աւերակաց և հիմնայարկ մեհենաց վրայ կեցած՝ կը կանչէ մէկ Ո՞վսէս մը Հայաստանի տիրազգեաց եկեղեցեաց և մթացեալ վանորէից . մէկ Ո՞վսէս մը՝ որ Հրէից Ո՞վսէսին նման՝ իր աղգին ընդհանուր և ամենարուեստ վարդապետն է , ինքն ըլլալով պատմահարց ակնաղըիւր , ինքն բանաստեղծութեան վառիչ , ինքն ձարտասանութեան օրինակատու , ինքն աշխարհագրաց նախաշաւիղ , ինքն քերականաց առաջնորդ , ինքն թարգմանչաց գահագլուխ , ինքն եկեղեցական եղանակաց երաժշտապետ , ինքն բանասիրաց մէջ ամենահմուտ , ինքն մեր վարդապետաց վարդապետն , ինքն հնազէտնաւ մարգարէ , և այս ամէն անուններէ վերյատուկ կոչմամբ ինքն Վերթողահայր Հայոց :

Վերթող կ'ըսուին մեր մէջ քերականք և աւելի տաղացափ բանաստեղծք : Խորենացին գիտենք որ հին Վերականութիւն զըեր է կամ բացատրեր է , բայց զնոյն իրեն աշակերտակիցքն ալ Ո՞ամբըրէ , Դաւիթ , Ոտեփանոս և այլք գրեր են . միայն անոր համար ըկարծուիր որ Վերթողահայր ըսուի , հապաւելի բանաստեղծական կամ երգահան գրուածոց համար . և թէ այս մոքով այս անուանս արժանաւոր է , վկայ ըլլան մեզի իր ծանօթ սքանչելի շարական ներն , որոնց շափական շինքն ալ իմաստն ալ , եղանակներն ալ՝ կը ցուցընեն թէ շատ գերազանց ոգի և ձաշակ ունի եղեր մեր Խորենացին : Ուակայն միայն ասոնց համար ալ չեմք կարծեր որ Վերթող ըսուի , ինչու որ այս երգերս կ'երեւի թէ ծերութեան և վերջի ատեն ներն երգած է . իսկ քերթող անուան սիրզըն կը վայլէ որ այն ատեն առած ըլլայ , երբ որ իր ընկերներն իրենց փա-

ուաւոր մականուններն առեր են , երբոր նոր Ամենքէն դարձած , մանաւանդ թէ զեռ հոն իսկ՝ իր եղբայրը Ամբրէ Ա երծանող կ'ըսուէր , 'Դաւիթ' Անյաղթ , Պ ազար՝ Պատմագիր և Շարտասան , Աքրահամ Հռաետոր , բաց 'ի Ամենացի և Ծփազանդացի ըսուելէն , այսպէս ալ մէկալնոնք մէյմէկ գովանի անուամբ ըստ իւրաքանչիւր առաւելութեանց , որ վերջն Հայաստանի մէջ աւելի պայծառացուցին . ըստ այսմ և Խորենացին ալ քերթողութեան անուան արժանի գործք մը երևցուցած պիտի ըլլայ , որուն համար Քերթող և վերջը Քերթողահայր ըսուի :

Բանաստեղծական ոտանաւոր գըրուածքներ ունենալուն ստոյգ հաւաստիքն ունինք իրեն պատմութեան Գ գրոց ցանկին վերջը , որ ողբէն ալ վերջը կը գրէ 'Տաղբ չափաւ յինքն և 'ի Ահակ Բագրատունի . . . որչափ փափաքելի է աս տաղս՝ այնչափ ալ սրտերնուս մեծ զրկումն , որ վերնագիրն ունենանք և բուն գրուածքը չգտնենք : Այս միայն է մեր գիտցածը , բայց հայկական քըրնարն անտարակոյս իրաւամքք դեռ շատ երգեր և չափական տաղեր ալ կը յուսոյ իր Առվասէն , թէպէտ մեղք որ դարերէ 'ի վեր բաղդը չէ օգնած յուսոյն . թէպէտ և ինքը դեռ յուսահատած չէ , բայց ցաւն ալ պզտի չէ : Այս ցաւոյն սուտ միխթարութիւն , մանաւանդ թէ ալ աւելի ցաւի պատճառ մը կը գտնէ՝ մեղմէ առջիններուն ցաւն ալ Խորենացիէն զրկուելնուն պատճառաւ . միայն մենք չենք եղած իրեն կարուտ , ինչուան իր կենդանութեան ատենէն ալ իրեն կարօտողք կան եղեր : Երբոր սուրբ Ահակայ և Աներոպայ մեռնելէն վերջն Հայաստան դարձեր է Խորենացին , ուզեր է անոնց բռնած համբովն և իր 'Ամենիմաստ արուեստովն և կատարելագոյն յարմարութեամբն . . . ինչպէս ինքն իսկ կը վկայէ , Հայոց մէջ ծաւալել իր զանազան գիտութիւններն , և գեղեցիկ կարգերով զարդարել զՀայաստան . բայց տեսնելով մէկ կողմէն աշխարհին աւերմուն .

քը և Պարսից հալածանքը , մէկալ կողմէն նախարարաց անհոգութիւնն և թշնամութիւնը , մէկ կողմէն եկեղեցականաց և կրօնաւորաց պաղութիւնն և ուսումնատեցութիւնը , մէկալ կողմէն անոնց թանձր ու ծդրած ախորժակները , բողոքեր է թէ , 'Ով այ . . . սուհետեղ զմերս յարգեացէ զուսումն , . . . ով ուրախացի ընդ յառաջադիմութիւնս՝ մասամբ ինչ յաղթահարեալ . . . ով զմեզ սփոփեսցէ գովելով : . . . Ով . . . ոք 'ի ձէնջ թոշակս յաղագս մեր . . . ով վարդապետացն մաղթանս . . . ով ոք . . . բան յօժարեցուցող կամ յորդորական . . . ով ոք յերթալս մեր բեռնաբարձս . . . ով ոք 'ի գալն մերում հանգիստ կամ . . . տուն կամ օթանոց մեզ պատրաս . . . տեաց . . . : Ասոնք սրտէն ըսելով , և անմահ գրով գրելով այն ազգու ողբերն որ կը կարդանք իր պատմութեան Բ և Գ գրոց վերջին գլուխներուն մէջ , սև աչք մը տալով Հայաստանին սև երեսին՝ ծածկեր է ինքը զինքը . և թէպէտ իր լրնկերակիցներն ալ ջանացեր են կամ իրեն նմանիլ կամ զինքն իրենց նմանցընել , բայց երկուքն ալ չեն կրցած . իրենք մնացեր են Հայոց մէջ ծանօթ , իմացընելու թէ ինչպիսի անձէ զուրկ մնացիք , և իրենք իսկ շատ տարի փափաքեր են տեսնելու իրենց պանծալի աշակերտակիցը , բայց զնուր ջանք . Պիւտ կաթուղիկոսն ալ որ իր հին դասընկերն էր և անոր համբաւն լսած՝ շատ փնտըռել տուեր է բայց չէ գտած : Այս կերպով պատժեր է Առվասէ Քերթողահայը՝ մեր ապերախտ հայրերն , իր ողբախտուն բարկութեանը մէջ Ասրայէլի նման յանգիմաննելով զանոնք . ' Արք . . . Արամեանք մինչեւ յերբ էք ծանրա . . . սիրտք . . . քանզի զենէք զենումն ան . . . օրէնութեան և զյուսացեալսն 'ի . . . Տէր՝ արհամարհեցէք . . . :

'Բանի որ այս զրկմանս ցաւը սրտերնուս վրայ տպաւորուած է՝ զիապուած մը պատմենք , ուսկից յուսամ որ միխթարուինք ալ . աս զիպուածս Պիւտայ ատեն կը պատահի , և թէ գրով և թէ բերնով աւանդուած է :

Պահւտ՝ նախնի և հիմնակուան ընտիր հայրապետաց սովորութեամբ իր վիշակին եկեղեցիներուն այցելութիւն ընելու ատեն, անգամ մ'ալ Ա աղարշապատռ մէկ գեղ մը կ'ինջնայ, որ ոմանք ( Հականն է կ'ըսեն, Ա ջմիածնայ մօտ, և անոր եկեղեցւոյն ալ այցելութիւն ընելէն ետեւ՝ տեղացոց գլխաւորը զինքը կ'ընդունի, և հարկինք մը կ'ընէ մեծ պատռով, անոր հետ եղած եկեղեցականաց և իշխանաց ալ մէկտեղ. Հարկինքին ատեն բազմութիւն մարդկան հոն կը զինդուին զանազան կողմերէ, և պատռոյ համար կը սկսին ամէնքը մէյմէկ երգ մէյմէկ գովեստ երգել կաթուղիկոսին առջև գալով, որ անոր ալ շատ հաճոյ կ'անցնի : Այն բազմութեան մէջ աղքատ ծեր մ'ալ ծանր ու լուռ կեցած հանդէսը կը զիտէ եղեր. ուրիշ մէկ մ'ալ որ շատ անգամ զայն ծերը տեսեր ու զիտէ եղեր որ ան գեղէն է և ձայն ալ ունի, Ծանրուկ, կ'ըսէ, դուն ալ բան մը չերգես մեր կաթուղիկոսը

պատռուելու . նա խաճնելով ետ կը քաշուի, Այս տգէտ պանդուխտ ծեր մ'եմ, ըսելով. բայց մէկալը սիրտ տալով ու անոր Ճերմակ կախած մօրուքը շոշացելով առաջ կը քաշէ կաթուղիկոսին առջեւ ու կը ստիպէ որ բան մը երգէ : Ո՞էկ մ'ալ ինչ կը տեսնես, յանկարծ ծերը կը փոխուի, նոր մարդ մը կ'ըլլայ, նոյն ծերն՝ բայց նոր դէմք նոր ձայն, կարծես թէ Ո՞վսէս մարգարէին Ճառագայթաւետ լցոսը վրան կ'ինջնայ, գետնակոր գլուխը կը վերցընէ, կուրծքը կը տնկէ, երեսները կարմիր կը վառին, աչուրները կրակի պէս կը փայլփայլին, շրթունքները վարժ նուագարանի մը պէս կը շարժին, և ծերացած ծոցէն երիտասարդ ձայն մը կը լսուի նման հնցած քնարի եղանակի, որ հննալովը միայն աւելի անուշութիւն առած ըլլայ. այն ձայնը՝ ամենուն ապշած լուած անշունջ ժողովին մէջ այսպէս կ'երգէ, երաժշտական ներդաշնակութեք խաղալով ողորելով.

“ Ավարքայակերպ ը տէր քահանայապետ ը սուրբ  
Աւ ը հովիւ բարի,  
Ա յերկնայինաըն նրմանեալ հրեշտակատեսիլ  
Արքգեմքեմըք քեղ ը զերգս, քեղ ը զերգը, երգեմըք քեղ ը  
զերգս, երգեմըք քեղ ը զերգս :  
Աւ 'ի շըրթանց քոց բըղխեալ ջուր կենդանի  
Արանգ երանգ ներբըներբական ծաղկօք.  
Արքգեմք քեղ ը զերգս, և այն .  
Ա ամս որոյ և զբառիցն աւետարանին գետք  
Օ անուշն և զօդտակարն,  
Ա զբուցանելով ըզպասքումըն ծարաւեաց .  
Արքգեմք քեղ ը զերգս . . և այն :

ԱՎԾԵ ծերն ու անշարժ կը կենայ, բայց զեռ երկայն ատեն լսողներն ալ անշարժ կը մնան, կարծելով թէ զեռ անիկայ կը գեղգեղէ իր Արէտէնգէնց տէլ ը ղէրգը վարպետ երգն, որ զմայլած մտքերնուն ու ականջնուն մէջ զեռ կը թռթուայ, ինչուան որ ծերուն մօտ կեցած երիտասարդ մը՝ որուն վրայ որ այն երգին ատեն ամենէն աւելի այլայլութիւն մը կ'երևնայ, ալ չդիմանալով

առաջ կը վազէ կաթուղիկոսին, և անորն ալ և ամենուն ալ լուռութիւնն ու զարմացմունքն՝ աւելի մեծ զարմանքով մը ու լուռութեամբ մը կը կտրէ կանչելով, “ Ո՞վ սուրբ հայրապետ, սա է 'ի ” ձէնջ կորուսեալն ծերացեալ աշա, ” կերտն Ա ահակայ և Ա եսրոպայ ” Ա ” թենացին Ո՞վսէս . . : Կաթուղիկոսին զրեթէ խելքն գլխէն գացած, կէս թմրած կէս արթընցած, տեսածին

Հաւատալով բայց լսածին հաւնելով՝  
երկայն ու խոր քնէ ելլողի մը պէս կը  
հառաջէ, “ Վ՛վ աւետական ձայնս , ո  
ու տայրի ինձ տեսանել զնա „ :

Երիտասարդն արցունքները գետի  
պէս բխելով, սիրտը տակն ու վրայ ու  
զրեթէ շունչը կտրած հազիւ կրնայ նո-  
րէն կանչել, “ Վրդարութեամբ ասեմ  
„ սա է ծերացեալն ԱՌովսէս „ . այն  
ծերն է եղեր մեր անզին անբաւ ան-  
մահ լորենացին , որ զինքն այն աղքատ  
կերպով ծածկած՝ մօտիկ երեսուն տարի  
լուութեամբ քաշուած Ա Սմիածնայ Շ ո  
ղակաթի մեծայիշատակ վսեմական և  
սրբազն շուքերուն մէջ, և իր ամե-  
նասիրելի քեռացն ու վարդապետին  
սրբոյն Ա Եսրոպայ գերեզմանին սրտա-  
շարժ լուութեանց քով, կ'աշխատի ե-  
ղեր մեր ազգը փառաւորելու իրեն փառ-  
քով. այն երիտասարդն ալ իր խորհըր-  
դապահ աշկերտն է եղեր : Ա յս ծա-  
նօթութենէս վերջը ԱՌովսէսի ցցուցած  
դէմքը, Դիւտայ թռչին ու իր աննման  
աշակերտակցին հետ պլոտին , այն եր-  
կու մէկմէկէ վսեմ ծերերուն իրարու  
վրայ գուրգուրալը, բազմութեան հան-  
դիսականաց ուրախութիւնն ու լացը ,  
ըրս դին ձայն ելլելը, Դաւիթ Ա յաղ-  
թին ու իր գասընկերաց մէկ քանիին  
հօն համնիլը , շատ իշխանաց և ժողո-  
վրդեան հօն վազել գալը , հազար ու  
մէկ հարցմունքները , հազար ու մէկ ու-  
սումնական խնդիրներն և յանձնարա-  
րութիւններն որ կ'ընեն Խորենացւոյն ,  
և կաթուղիկոսին հօն զինքը Բագ-  
րեանդայ արքեպիսկոպոս ձեռնադրեն ,  
և այսպէս Հայաստանի իր յաղթական  
գանձը գտնելն , ինչպէս պատմէ դրիչ :

Հ . Դ . Մ

1 Վերոյգրեալ երգիս տեղ աւանդութիւն մը  
կը կարծէ՝ թէ մեր Քերթովահայրն երգած ըլլայ  
իր սքանչելի և հրեշտականուագ՝ ծննդեան ճրա-  
գալուցին հարցը, Որ գասուց երկնաւորաց . բայց  
հաւանական է մեր դրած երգն . որուն խաղերն  
ալ կը ցուցին թէ շատ վարպետ և անոյշ եղա-  
նակ պիտի ունենայ , շնչին ալ նման է այն հին  
մեղեղեաց՝ որոնց ոճն յայտնապես կը ցուցին թէ  
թարգմանչաց դարէն նոր չեն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լ ա տ է :

Գաեղեցին մտածութիւն և փա-  
փազելի գործ մըն է՝ կենցաղօգուտ  
մարդկանց վարքն հրատարակել , զորոնք  
աստուածային նախախնամութիւնը ի-  
բրեւ մէյմէկ լուսատու փարոս մէկմէկէ  
հեռու զբեր է որ մարդկային ընկերու-  
թեան առաջնորդեն քաղաքականութե-  
ամբուն մէջ :

Ա յ ս բարերարաց մէջ կրկին յիշատա-  
կաց արժամի է Լ ա փէ Դաղղիացի քա-  
հանան , որ բարերարութեան սիրով  
վառուած՝ իր ամէն հանձարն և ունե-  
ցածը չունեցածը , նաև բովանդակ իր  
կեանքն ալ մարդկանց բարիք ընելու  
նուիրեր էր : Դր ջանքն ալ պսակեց հրա-  
շալի գիւտով մը որով կարծես թէ բնու-  
թեան պակատութիւնը ուղղեց՝ խլց  
ու համերց գալրոց բանալով : Ինչ որ  
քաջասիրտ քարոզիչք աստուածային  
նախամնձով վառուած՝ թողով իրենց  
հայրենիքը հեռու աշխարհքներ կ'եր-  
թան և մահուն դէմ կը կուտին , որ  
պէս զի վարենիներն հաւատքի բերեն՝  
նոյնը ըրաւ մէկ կերպով մը Լ ա փէն՝ որ  
խուլ և համբ մարդկանց սրտին մէջ  
մտուց իրենց գերազոյն վախճանը :

Լ ա րոլս Ա կ բ ա յ է լ տը Ա լ ա փէ ծնաւ  
1712 նոյեմբերի 25-ին Ա բ ը ս ա յ ի մէջ .  
հայրը որ արքունի Ճարտարապետ էր և  
շատ բարեկարգ կեանք կ'անցընէր , իր  
տղաքն ալ կը մնուցանէր ամէն բանի  
մէջ չափաւորութեան և առաքինութե-  
սիրովը : Լ ա փէ պատմանին դեռաբոյս  
հասակին մէջ երկեցուց իր բնաւորու-  
թեան ազնուութիւնը . անոյշ կերպ մը ,  
խնարհովի հեզութիւն մը , և ուրիշի  
օգնելու զարմանալի ջանք մը ունէր ,  
որն որ ցըցուց ինչուան իր կենաց վերջին  
թելը : Ուսման մէջ ալ շատ յառաջա-  
դիմ էր . երբոր տանըեօթը տարուան  
եղաւ փափաքեցաւ եկեղեցական վի-  
ճակ մանելու . ուստի շատ դժուարու-  
թեամբ ծնողացմէ հաւանութիւն առ-